ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի ապրիլի 28-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրում 2022 թվականի մարտի 31-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 17.02.2022թ. N200-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 պայմանագրի գնի ավելացում, վճարման ժամանակցույցի հաստատում՝ նոր խմբագրությամբ:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.3 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 10

28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի

ք. Երևան «31» 03 2022թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արման-Թաման» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Բաղդասարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.02.2022թ. N 200-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 28.04.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 և 4.1.2 կետերում «5 000 000 (հինգ միլիոն)» թիվը և բառերը փոխարինել «5 273 400 (հինգ միլիոն երկու հարյուր յթանասուներեք հազար չորս հարյուր)» թվով և բառերով:

1.2 Հաստատել 2022 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Արման-Թաման» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Գավառ մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115

Տնօրեն՝

_____ Ա. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
28.04.2017թ. կնքված
N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի
<<31>> 03 2022թ. կնքված N 10 համաձայնագրի

<<Հավելված
28.04.2017թ. կնքված
N ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Մինչև 2021թ. վճարված գումար	Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում*											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
ՀՀ Լոռու մարզի ք.Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	4 090 500	-	-	-	442 200	442 200	442 200	1 182 900	1 182 900	1 182 900	1 182 900	1 182 900	1 182 900

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Արման-Թաման>> ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Գավառ մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115

Տնօրեն՝

Ա. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «29» 03 2022թ.

''Արման-Թաման'' ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Բաղդասարյանի /նք 002936516, տրվել է 02.11.2015թ. 040-ի կողմից/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.5 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.6 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.7 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.8 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.9 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

''Արման-Թաման'' ՍՊԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ

''Հայբիզնեսբանկ'' ՓԲԸ Գավառ մ/ճ

ՀՀ 11500844540100

ՀՎՀՀ 08417115

Տնօրեն Ա. Բաղդասարյան

Կ.Տ.

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝	**''Արման-Թաման'' ՍՊԸ**
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝	**''Հայբիզնեսբանկ'' ՓԲԸ Գավառ մ/ճ**
6. Վճարողի հաշվի համարը՝ **11500844540100**	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ **08417115**	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝	**ՀՀ Քաղաքաշինության կոմիտե**
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02565827**	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝	**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)	**900005000758**
14.Գումարը (թվերով և բառերով)՝	**27340/քսանյոթ հազար երեք հարյուր քառասուն/**
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝	**ՀՀ դրամ/AMD/**
17.Գործարքի (վճարման) նպատակը՝	***(պայմանագրի կատարման ապահովման համար)***
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>	
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

«ԱՐՄԱՆ-ԹԱՄԱՆ»
"ARMAN-TAMAN"
"ARMAN TAMAN"
08417115